ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

# ՈՐՈՇՈՒՄ
## Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/0171/02/25 ք. Երևան
16 Հունվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

## ՊԱՐԶԵՑ

«ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Երևանի պետական համալսարան ՀՄԴ-ի՝ 27.12.2024թ.-ի ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով ընդունված որոշումը՝ գնման ընթացակարգը 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտը մերժելն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի

համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Երևանի պետական համալսարան ՀՄԴ-ից պետք է պահանջել 27.12.2024թ.-ի ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով ընդունված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1.«ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Երևանի պետական համալսարան ՀՄԴ-ի՝ 27.12.2024թ.-ի ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով ընդունված որոշումը՝ գնման ընթացակարգը 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտը մերժելն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2.Երևանի պետական համալսարան ՀՄԴ-ից պահանջել դատարան ներկայացնել 27.12.2024թ.-ի ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի եղանակով ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կարիքների համար ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով ընդունված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը Երևանի պետական համալսարան ՀՄԴ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

**Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան**

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2025.01.16 11:41:02 AMT

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*